ԳԻՎՈՐԳ ԳՐԻԳ

ԳՅՈՒՂԱՑԻԼ ՈՒ ԳԱՅԼԸ

ԵՐԵՎԱՆ

1927

ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳ

91.99-93

Գրաքննության կոմիտեի
կողմից հաստատված է
1927 թ. 9/IV

ԳՅՈՒՂԱՑԻՆ ՈՒ ԳԱՅԼԸ

(Հեքիաթ)

ԹԻՖԼԻՍ—1927

Ի.

Գարնան մի որ ծեր գյուղացին
Դաշտի միջով անցնելիս,
Տեսավ հրեա մի գայլ գալիս
Դողդողում է ու լալիս։
Աղճաց նրան մեր գյուղացին,
Ուզեց պատճառն իմանա,
Ու մոտեցավ չար գազանին,
Խնդրեց ցավը պատմի նա։

—Ա՛յ իմ ապեր, իմ հին ծանոթ,
Ասաց գայլը լացակում,
Հիմի շուտով կգան քեզ մոտ
Վորսորդները արնախում։

Ինձ են ուզում, ինձ են փնտրում.
Ընկել են իմ հետևից.
Մի ճար արա, բալիդ սիրուն,
Ազատիր ինձ սև մահից...

Եվ շատ յերկար չմտածեց
Ծեր գյուղացին մեր բարի,
Առավ պարկը, կապը քանդեց
Գայլին ասաց.—Դե, արի,

Մտիր պարկը ու սուս արա,
Ձեն ու ծպտուն չհանես.
Պառկիր անշարժ խոտի վրա
Ու փորձանքից կազատվես։

Գայլը ուրախ պարկը մտավ,
Իսկ գյուղացին սպասեց.
Մի քիչ անցած վորսորդն յեկավ
Ու ծերուկին հարցրեց.

—Ե՛ հեյ ծերուկ, յեկ ճիշտն ասա,
Եսպես դաշտով գնալիս,
Են մեծ գայլին չար ու ագահ
Չե՞ս պատահել փախչելիս։

Ծերը ասաց թե՝ չեմ տեսել,
Ու վրսորդը հեռացավ.
Գայլը չուզեց էլ սպասել,
Իսկույն պարկից դուրս պրծավ...

Բերանը բաց, փրփրակալած
Վրա ընկավ կատաղի,
Ուզեց իսկույն անմեղ ծերին
Պատառոտի և ուտի...

—Ի՞նչ է մեղքս, այ սևերես,
Լավությունս չե՞ս հիշում.
Մի՞թե ամեն լավ գործն եղպես
Մոռացվում է ու կորչում...
—Հա, հա, հա, հա, գայլը խնդաց,
Ի՞նչ միամիտն ես գտել.
Լավությունը հին ու անցած
Հենց մարդիկ են ուրացել...
Չե՞ս հավատում, արի գնանք
Ում ուզում ես հարցնենք,
Թե սուտ դուրս գամ՝ դու ազատ ես,
Թե ճիշտ յեղա՝ ուտեմ քեզ...

II

Ու գնացին. իրենց ճամբին
Պատահեցին մի կատվի.
Գլուխ տվին գայլն ու ագին
Ու կանգնեցին բարևի.—

Ասին.—Փիսո, ասա մեզ ճիշտ,
Դու խելոք ես ու արդար,
Լավությունը հիշվում է միշտ,
Թե մոռացվում միայար...

—Մոռացվում ե, ասաց կատուն,
Վոչինչ, վոչինչ չի հիշվում.
Ա՛յ յես, քանի ժիր ու արթուն
Մկներ եյի հա բռնում,
Տերս սիրում, փայփայում եր,
Պատվում եր միշտ ու գովում.
Հենց ծերացա, ինձ լավ ծեծեց,
Հայհոյեց ու դուրս արեց.
Չե, չե, յերբեք ես աշխարհում
Լավությունը չի հիշվում...

—Առաջ գնանք, ասաց գայլը,
Յերկրորդից ել հարցնենք.
Թե սուտ դուրս գամ՝ դու ազատ ես,
Թե ճիշտ յեղա՝ ուտեմ քեզ։

Ու գնացին. իրենց ճամբին
Պատահեցին Բոզարին.
Գլուխ տվին գայլն ու ապին
Բարևեցին ու ասին.—

Մոտ յեկ, Բողարը, ասա մեզ ճիշտ,
Դու խելոք ես ու արդար.
Լավությունը հիշվո՞ւմ է միշտ,
Թե՝ մոռացվում միալար։

—Մոռացվում է, ասավ շունը,
Վոչինչ, վոչինչ չի հիշվում.
Պահում եյի բակն ու տունը,
Տիրոջս լավ ծառայում.

Հենց ծերացա, անուժ դարձա,
Ուզեց նա ինձ սպանել.
Լավ եր մխաքը շուտ հասկացա,
Գլուխս առա ու փախա։

Առաջ անցան. տեսան հրես
Մի շեկ աղվես է գալիս,
Ուրախ, զվարթ ծաղկանց միջին
Պարում է ու ծափ տալիս։

—Աղվես, աղվես, խելոք ես դու
Յեվ փորձված ես և՛ գիտուն.
Վոչ Բոզարն ես, վոչ էլ կատու,
Այլ ավելի իմաստուն.

Ասաց ծերը լացակումած,
Պատմեց ցավը իր սրտի,
Սև փորձանքը գլխին յեկած
Դառը վիճակն իր բախտի։

Խղճաց ծերին աղվեսը շեկ.
—Սուտ եք ասում, ասաց նա.
Չեմ հավատում՝ թե եդ պարկում
Գայլը պահվել կարենա։—

Ու բարկացավ գայլը շատ թունդ.
—Պարկը բռնեք, ասավ նա.
Մեջը նեռվեց, ինչպես մի գունդ,
Վոր էլ կասկած չըմնա։

—Ապի, ապի, պարկը կապի,
Փեսը վեր առ, վրա առ,
Ինչպես արա հոգին հանի
Եվ ապերախտ գազանի...

Ծերը յելավ փեսը առավ
Տվեց, տվեց հա տվեց.
Գայլը գոռաց մեղմ, մեռամ,
Աղվեսը պինդ ծիծաղեց։

Գայլը տեսավ, վոր ճար չկա,
Պարկը պատռեց դուրս պրծավ.
Ջարդ ու փշուր արուՆվա
Գլուխն առավ ու փախավ...

Կանաչ դաշտում, ծաղկանց գրկում
Մարդ ու աղվես միասին
Պար են բռնել, ծափ են տալի
Ու ծիծաղում լի ու լիս

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0033987

Գինը 25 կոպ.

Բուհ.խնդ. 198
3

А
I
556

4-ая типография Полиграфтреста.

Главлит № 597. Тираж 2200.

'Իմաստ' Тифлис, ул. Л. Думбадзе (б. Вельяминовская), № 14
Госиздат С. С. Р. Армении
Կամ հեղինակին—Вознесенская, 2.

ЦЕНА

А 556